«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT05-2106-C (0107)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 5-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	01 հուլիսի 2021 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11/Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ (առցանց),
Անահիտ Ադամյան (առցանց),
Անահիտ Հովհաննիսյան (առցանց),
Արիս Բերբերյան (առցանց),
Արթուր Ալավերդյան (առցանց),
Հակոբ Հակոբյան (առցանց),
Հովհաննես Աթաբեկյան (առցանց),
Սարգիս Բաղալյան (առցանց),
Վասկեն Յակուբյան (առցանց):

Նիստին չի մասնակցել՝
Տիգրան Հարությունյան:

5-րդ հարցից սկսած Արիս Բերբերյանը նիստին չի մասնակցել:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի ինն անդամներ, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին.
Դավիթ Սահակյան (գործադիր տնօրեն) (առկա),
Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա),
Նելլի Բալայանը (ֆինանսական համակարգող) (մասնակցել է հարց 4-ի քննարկմանը) (առկա),
Տիգրան Հարությունյան (բիզնես խորհրդատու) (մասնակցել է հարց 5-ի քննարկմանը) (առցանց):

Հարց 1. Օրակարգի հաստատում Որոշում՝ հարց 1 *Հաստատել ՀԽ-ի նիստի 2021 թվականի հուլիսի 01-ի օրակարգը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:
Որոշում՝ հարց 2 *Որոշվեց ի գիտություն ընդունել Դավիթ Սահակյանի ներկայացրած հաշվետվությունը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 3. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հորգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգի խմբագրման հաստատում:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հորգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգում կատարել համապատասխան փոփոխություն (3.20 կետը նախնական խմբագրել հետևյալ կերպ՝ «Դպրոցը «Ուսուցիչների խմբի կողմից առաջադրված ներկայացուցիչ» դասային խմբի համար կազմակերպում է երկփուլանի ընտրություններ, որոնց հիման վրա էլ հրապարակվում են դրանց արդյունքները, իսկ «Այբ» դպրոցի շրջանավարտ» դասային խմբի համար ներկայացուցիչ նշանակվում է Շրջանավարտների ակումբի նախագահը»): Որոշվեց հարցը փոխանցել իրավաբանի մշակմանը, ապա՝ վերջնական, էլեկտրոնային հաստատման ուղարկել ՀԽ-ին:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 4. Մայիսի 30-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություն և բյուջեի կատարողականի կանխատեսում:
Որոշում՝ հարց 4 *Որոշվեց ի գիտություն ընդունել Նելլի Բալայանի ներկայացրած հաշվետվությունը:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 5. Միջին դպրոցում միջավայրային խնդիրներ. բացահայտում, լուծում, արդյունքներ:
Հարց 6. Դպրոցի հողատարածքից մոտ 1400 քմ տարածքի վարձակալությամբ տրամադրման հարց:
Որոշում՝ հարց 6 *Որոշվեց Դավիթ Սահակյանին լիազորել բանակցություններ վարել հարևանի հետ մոտ 1400 քմ հողատարածքը վարձակալությամբ տրամադրելու համար: Վարձակալության պայմանագիրը պետք է արգելի կառուցապատումը, հնարավորություն տա Դպրոցին երեքից վեց ամսվա ընթացքում միակողմանի լուծել պայմանագիրը, տարեկան վարձակալության վճարը պետք է լինի 3000-7500 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի սահմաններում: Տարածքը պետք է օգտագործվի միայն կայանատեղիի և ավտոների անցման վայր: Վերջնական լուծում-առաջարկը ներկայացնել ՀԽ-ին հաջորդ նիստին:* Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 7. Ռազմավարական պլանավորման հանդիպման կազմակերպում ՀԽ մակարդակով:
Որոշում՝ հարց 7 *Որոշվեց Ռազմավարության պլանավորման գործընթացի քննարկման համար ՀԽ անդամների հանդիպում կազմակերպել հուլիսի 15-ին երևանյան ժամանակով ժամը 09:30-ին:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 8 ՀԽ-ի հաջորդ նիստի հաստատում:
Որոշում՝ հարց 8 *Որոշվեց ՀԽ-ի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի սեպտեմբերի 30-ին:* Որոշումը կայացված է միաձայն:
Կետ 9 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել սեպտեմբերի 30-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 10. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 12:40-ին:

ՀԽ անդամներ

Անահիտ Ադամյան _____

Անահիտ Հովհաննիսյան _____

Արիս Բերբերյան _____

Արթուր Ալավերդյան _____

Հակոբ Հակոբյան _____

Հովհաննես Աթաբեկյան _____

Սարգիս Բաղալյան _____

Վասկեն Յակուբյան _____

ՀԽ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____